ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» 12 2012թ. Թիվ 76

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիտարկելով ներկայացված գլխավոր հատակագծի լրամշակման աշխատանքները, մասնավորապես բնակավայրի որոշակի հատվածներում տարածքների փաստացի օգտագործմամբ պայմանավորված նպատակային փոփոխությունները՝ նպատակաուղղված առավել արդյունավետ հատակագծային կառուցվածքի ձևավորմանը և դրա հետ կապված համապատասխան հատվածներում իրականացվող փոփոխությունները, տարածքի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպման հետ փոխկապակցված.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել Արտաշատ քաղաքային համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծի կատարված լրամշակման աշխատանքները:

Որոշումն ընդունվեց միաձայն՝

Բենիամինյան Կարեն
Թաղևոսյան Արման
Հայրապետյան Ռուզան
Մանուկյան Ժորա
Նազարյան Գոռ
Վարդանյան Ռազմիկ
Դերմոյան Արման
Կիրակոսյան Գրիգոր
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Վարդազարյան Վաչագան

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» 12 2012թ. Թիվ 77

## ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԱՃԱՌՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 50 ՏԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԺԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, հաշվի առնելով Արտաշատ քաղաքի բնակչուհի Ժաննա Ստեփանյանի սոցիալական ծանր պայմանները և ընդառաջելով նրա խնդրանքին.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Արտաշատ քաղաքի Աճառյան փողոցի թիվ 50 տան բնակչուհի Ժաննա Ստեփանյանին տալ շինության գույքահարկի արտոնություն՝ 16066 /տասնվեց հազար վաթսունվեց/ դրամի չափով:

Որոշումն ընդունվեց միաձայն՝

Բենիամինյան Կարեն
Թադևոսյան Արման
Հայրապետյան Ռուզան
Մանուկյան Ժորա
Նազարյան Գոռ
Վարդանյան Ռազմիկ
Դերմոյան Արման
Կիրակոսյան Գրիգոր
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Վարդազարյան Վաչագան

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ.ՄՈՒՐԱԴՅԱՆ